ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2011թ. օգոստոսի 3-ին, թիվ 84 -Ա
ք.Աշտարակ

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2002թ. հուլիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի քաղաքացիական ծառայության առաջատար թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ, ինչպես նաև առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորումն անցկացնող մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգը հաստատելու մասին» թիվ 7 որոշումը՝ *որոշում եմ*

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության առաջատար մասնագետի /ծածկագիր՝ 61-3.2-20/ 2011թվականի օգոստոսի 4-ին մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2011թ. օգոստոսի3-ի թիվ 84-Ա որոշման

ԿԱԶՄ

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության առաջատար մասնագետի /ծածկագիր՝ 61-3.2-20/ 2011թ. օգոստոսի 4-ին մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի

1. Սևան Ասրյան	- ՀՀ ՔՇԽ աշխատակազմի տնտեսական բաժնի վարիչ, հանձնաժողովի նախագահ
2. Արմեն Գրիգորյան	- ՀՀ ՔՇԽ աշխատակազմի անվանացանկի և գրանցամատյանի վարման վարչության գլխավոր մասնագետ, հանձնաժողովի քարտուղար
3. Սեդրակ Վարդանյան	-ՀՀ Արագածոտնի մարզպետի խորհրդական
4. Աշոտ Դավայան	-ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ
5. Գոհար Բոցինյան	- Աշտարակի թիվ 2 հիմնական դպրոցի ուսուցչուհի
6. Արմինե Սիմոնյան	- Աշտարակի թիվ 1 հիմնական դպրոցի ուսուցչուհի

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար՝ Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ